ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆ
«Նախապատրաստենք մեր աշակերտներին *իրենց* ապագայի համար»
223 N. Jackson Street, Glendale, CA 91206
Հեռախոս՝ 818-241-3111 • Ֆաքս՝ 818-548-9041

ԲԻԶՆԵՍ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

2022-23 ուս. տարի

Հարգելի ծնողներ,

Ամեն տարի Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը ծնողներին տեղեկություն է տրամադրում մեր դպրոցներ հաճախող աշակերտների համար դժբախտ պատահարներին առնչվող **կամընտրական, հավելյալ ապահովագրության** վերաբերյալ: Թեև Կրթաշրջանը միշտ քայլեր է ձեռնարկում ձեր երեխաներին պաշտպանելու համար, ապահովագրության այս տարբերակը հասանելի է:

Առողջապահության ապահովագրություն չունեցող ծնողներին խրախուսում ենք հաշվի առնել իրենց երեխաների համար դժբախտ պատահարների լրացուցիչ ապահովագրությունը: Այն ծնողներին, ովքեր ունեն առողջապահության ապահովագրություն, որը ներառում է իրենց երեխաներին, խրախուսում ենք վերանայել այս ապահովագրության առավելությունները՝ որպես հավելում իրենց գործող ապահովագրությանը: Սա հավելյալ ապահովագրություն է. ձեր հիմնական ապահովագրության մատակարարի կողմից վճարվող ցանկացած գումար կհանվի ծածկված ծախսերից, և հավելյալ ապահովագրությունը կվճարի առավելությունները՝ հիմնվելով կորստից մնացած գումարի վրա: Խնդրում ենք ժամանակ հատկացնել՝ ուշադիր կարդալու և հասկանալու համար, թե ինչ առավելություններ ունի դժբախտ պատահարների հավելյալ ապահովագրությունը և վերանայել գրքույկում ներկայացված բացառությունները և այլ սահմանափակումները:

Myers-Stevens ընկերության տեղեկությունը կցվում է ձեր հարմարության համար: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը ֆինանսական կապեր չունի Myers-Stevens ընկերության հետ և ֆինանսական օգուտ չի ստանում նրանցից:

Գրանցվելու համար այցելեք www.myers-stevens.com. գրանցման հրահանգները հասանելի են կայքում: Մինչ ձեր երեխան իրավունք ունի գրանցվելու ցանկացած ժամանակ, դժբախտ պատահարներից բխած բժշկական պլանների և ատամնաբուժական դժբախտ պատահարների պլանների համար վճարման դրույքաչափերը նույնն են՝ անկախ գրանցման ամսաթվից: Երբ գրանցման ընթացքն ավարտվի, ձեր տուն փոստով կուղարկվի նույնականացման քարտի ապահովագրման չափը հաստատող փաստաթուղթը:

Եթե հարցեր ունեք առկա ապահովագրման չափերի, COVID 19-ի հետ կապված ճշգրտումների կամ գրանցման հարցերի վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել Myers-Stevens & Toohey ընկերությանը (800) 827-4695 հեռախոսահամարով: Այն ծնողները, ովքեր իսպաներեն թարգմանության կարիք ունեն, առկա են երկլեզու խոսող ներկայացուցիչներ:

Հարգանքով,

Դեբորահ Դիլ
Բիզնեսի և ֆինանսների գծով ժամանակավոր տնօրեն